ԼՌԻՄ. ՄԻԽԱՅԻԼ ԴՈՒԴԻՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԸ

«Հայաստանը անհրաժեշտություն է դարձել ինձ համար»: Այս բառերը պատկանում են խորհրդային հայտնի բանաստեղծ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Միխայիլ Ալեքսանդրովիչ Դուդինին, որի հետ հանդիպում տեղի ունեցավ Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնում:

Պոեզիայի երեկոն ներածական խոսքով բացեց ԽՍՀՄ գրողների միության մարզային կազմակերպության առաջին քարտուղար Վարդան Հակոբյանը: Նա ընդգծեց, որ Միխայիլ Դուդինը որպես հավատարիմ բարեկամ միշտ էլ հայ ժողովրդի մոտ է շտապում նրա համար ծանր օրերին: Պատահական չէ, որ Ղարաբաղյան շարժման ընթացքում սա բանաստեղծի երկրորդ այցն է Արցախի հողը: Բազմաչարչար, բայց հպարտ գեղարվեստական խոսքի ոգեշունչ վարպետի ստեղծագործությունը սրտամոտ ու հասկանալի է ղարաբաղցի ընթերցողին, քանզի այն կոչ է անում արդարության, մերձավորի հանդեպ սիրո, բարոյական մաքրության: Այսօր Միխայիլ Դուդինը ինքն է անհրաժեշտություն դարձել Լեռնային Ղարաբաղի համար: Նա այստեղ հրատարակվող գրական-գեղարվեստական և հասարակական-քաղաքական «Արցախ» հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամ է:

Բանաստեղծի կյանքի և ստեղծագործության մասին համառոտակի պատմեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Մկրտչյանը: Նա ներկաներին նաև ծանոթացրեց Մ. Դուդինի վերջերս լույս տեսած «Ավետյաց երկիր» գրքին, որն ընդգրկում է բանաստեղծություններ Հայաստանի, նրա ժողովրդի մասին:

Լսարանին դիմելով, Միխայիլ Ալեքսանդրովիչ Դուդինը մասնավորապես ասաց.

— Թեև ես արդեն տարեց մարդ եմ, բայց ձեր ցավը խոցում է իմ սիրտը: Արվեստագետը պարտավոր է զգալ մերձավորի ցավը: Բանաստեղծությունը պետք է, պարտավոր է ոչնչով չքողարկված իր ոգով պաշտպանել խաղաղությունը, պաշտպանել արդարությունը: Հիմա մենք ապրում ենք բարդ ժամանակներ: Մեր երկրում հասարակության հոգևոր մաքրագործման ողբերգական փորձ է կատարվում: Եվ դրանից կախված է ամեն ինչ մեր հայրենիքի կյանքում, Հայաստանի կյանքում և ձեր՝ Ղարաբաղի կյանքում: Թե ես ինչ եմ գրել և ինչ եմ մտադիր գրել այստեղ իմ տեսած բոլոր դեպքերի մասին, դա մի բան է, բայց ես նաև կենդանի մարդ եմ, հրակայական կենսափորձով: Ես տեսել եմ երկու պատերազմ, մեկ շրջափակում և ահա տեսնում եմ երկրորդ շրջափակումը: Իմ հոգում շատ խոհեր կան իմ ժամանակի մասին: Այսօր հենց կուզենայի ձեզ հետ կիսել այդ խոհերը:

Վերջում բանաստեղծը արտասանեց իր բանաստեղծություններից, պատասխանեց պոեզիայի երկրպագուների բազմաթիվ հարցերին:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ